



# Մ ՈՒՐԲ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ Ե ԿԵՂԵՅԻ



### ՏՕՆ ՊԱՅԾԱՆԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

19 ՅՈՒՆԻՍ 2009

<b>Կիրակնօրեայ ընթերցումներ</b>	<b>Էջ 1</b>
<b>Իմաստութեան Մասին</b>	<b>Էջ 3</b>
<b>Յիսուսի Տասներկու Առաքելները</b>	<b>Էջ 5</b>
<b>Ծանուցում</b>	<b>Էջ 8</b>

#### ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ԳԻՐՔԷՆ

(7.25-8.4)

**Ի** մաստուծիւնը Աստուծոյ զօրութեան ճաճանչն է, ամենակալին փառքին ճշմարիտ ծագումը. ուստի ո՛չ մէկ պիղծ բան կը խառնուի անոր մէջ: Մշտնջենաւոր լոյսին նշոյլն է անիկա, Աստուծոյ ներգործութեան անարատ հայելին եւ անոր բարերարութեան պատկերը:

**Աստուած կը սիրէ միայն ան՝ որ իմաստութեամբ կ'ապրի:**

Մէկ է անիկա եւ ամենակարող, ինքնակալ է եւ բոլորը նորոգող: Բոլոր ժամանակներուն ալ մաքուր հոգիներուն մէջ կը բնակի եւ զանոնք Աստուծոյ բարեկամ ու մարգարէ կը դարձնէ, որովհետեւ Աստուած կը սիրէ

միայն ան՝ որ իմաստութեամբ կ'ապրի:

Իմաստուծիւնը աւելի գեղեցիկ է քան արեւը, գերիվեր է քան բոլոր համաստեղութիւնները: Լոյսին հետ համեմատած՝ գերազանց է անիկա, որովհետեւ մինչ գիշերը փոխն ի փոխ լոյսին տեղը կ'առնէ, չարը չի կրնար յաղթել իմաստութեան:

Անիկա աշխարհի մէկ ծայրէն միւսը կը սփռէ իր օգուտները եւ իր բարերարութեամբ կը խնամէ բոլորը: Երիտասարդութեանս օրերէն իսկ սիրեցի ու փնտռեցի զայն, ուղեցի զայն ինծի հարս ունենալ, անոր գեղեցկութեան ցանկացի: Անիկա իր ազնուական ծագումը կը փառաւորէ, որովհետեւ Աստուծոյ կեանքին հաղորդակից է եւ տիեզերքի Տէրը սիրեց զայն: Արդարեւ անիկա խորհրդակից է Աստուծոյ իմաստութեան եւ իր ընտրութեամբ մասնակից է անոր գործերուն:

#### ԶԱՔԱՐԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(14.16-21)

**Ա**յն ատեն, Երուսաղէմի վրայ արշաւած բոլոր ազգերու մնացորդները տարուէ տարի

Երուսաղէմ պիտի գան երկրպագելու Թագաւորին, ամենակալ Տէր Աստուծոյ, եւ Տաղաւարահարաց տօնը կատարելու: Այն ժողովուրդը որ մերժէ Երուսաղէմ գալ երկրպագելու Թագաւորին ամենակալ Տէր Աստուծոյ, անիկա անձրեւ պիտի չունենայ իր երկրին վրայ:

Եթէ եգիպտոսի ժողովուրդը չելլէ ու չգայ, պիտի ենթարկուի նոյն հարուածին որով Տէրը պիտի պատուհասէ այն ժողովուրդները որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար:

Եւ Պատուհասը որ եգիպտացիներուն վրայ պիտի գայ՝ պիտի գայ նաեւ բոլոր այն ժողովուրդներուն վրայ որոնք Տաղաւարահարաց տօնը կատարելու չեն գար: Այն օրը նոյնիսկ ձիերու սանձին վրայ գրուած պիտի ըլլայ. «Տիրոջ համար սրբագործուած»: Աստուծոյ տան կաթսաներն իսկ սուրբ պիտի համարուին զոհասեղանին վրայ դրուած տաշտերուն նման, ու Երուսաղէմի եւ Հրէաստանի մէջ գտնուող ամէն կաթսայ ամենակալ Տիրոջ անունով նուիրագործուած պիտի ըլլայ. այնպէս որ բոլոր անոնք որ զոհ մատուցանելու կու գան՝ պիտի առնեն զանոնք եւ անոնց մէջ եփեն իրենց մատաղը: Եւ այն օրը Աստուծոյ տան մէջ ոեւէ վաճառորդ պիտի չգտնուի:

#### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-7)

**Մ**ենք լսեցինք, մեր աչքերով տեսանք եւ մեր ձեռքերով շօշափեցինք Որդին, Բանը, որ սկիզբէն իսկ կեանքի ստեղծիչն էր: Ան նոյնինքն կեանքն էր, որ յայտնուեցաւ: Մենք տեսանք եւ կը վկայենք, ձեզի պատմելով անոր մասին, այսինքն՝ յաւիտենական կեանքին մասին, որ Հօրը հետ էր եւ այժմ մեզի յայտնուեցաւ: Ինչ որ տեսանք ու լսեցինք կը պատմենք ձեզի, որպէսզի դուք ալ մասնակից դառնաք այն հաղորդակցութեան, որ մենք ունինք Հօրը եւ անոր Որդոյն Յիսուս Քրիստոսի հետ, եւ ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ: Ահա թէ ինչու կը գրենք ձեզի այս նամակը:

Պատգամը որ իրմէ լսեցինք եւ ձեզի կը փոխանցենք, սա է՝ թէ Աստուած լոյս է, բնաւ խաւար չկայ անոր մէջ: Արդ, եթէ ըսենք «հաղորդակից

Եթէ ըսեմ  
“Դադորդակից  
եմ իրեմ” եւ միւս  
կողմէ շարունակեմ  
խաւարի մէջ ապրիլ,  
կը ստեմ ահա եւ  
նշմարտութեան դէմ  
կը գործեմ:

ենք իրեն” եւ միւս  
կողմէ շարունակեմ  
խաւարի մէջ ապրիլ,  
կը ստեմ ահա եւ  
նշմարտութեան դէմ  
կը գործեմ: Իսկ եթէ  
Աստուծոյ լոյսին մէջ  
քալենք, այն ատեն  
նշմարտապէս հաղոր-  
դակից կ’ըլլանք իրա-  
րու, եւ իր Որդւոյն

Յիսուսի արիւնը կը սրբէ մեզ ամէն մեղքէ:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(16.13-17.13)**

**Ե**րբ Յիսուս Փիլիպպոսի կառուցած կեսարիայի  
կողմերը եկաւ, իր աշակերտներուն հարցուց.  
«Մարդիկ ի՞նչ կ’ըսեն մարդու Որդիին մասին.  
ն՞ով եմ ես»: Անոնք պատասխանեցին. «Ոմանք  
քեզ Յովհաննէս Մկրտիչը կը կարծեն, ոմանք  
Եղիա մարգարէն, իսկ ուրիշներ՝ Երեմիան կամ  
մարգարէներէն մէկը»: Յիսուս հարցուց անոնց.

«Իսկ դո՛ւք ով կը կարծէք զիս»: Սիմոն Պետրոս պատասխանեց.  
«Դուն Քրիստոսն ես կենդանի  
Աստուծոյ Որդին»: Յիսուս ըսաւ  
անոր. «Երանի՛ քեզի Սիմոն,  
Յովնանի որդի, որովհետեւ  
ատիկա քեզի յայտնողը մարդ  
մը չէր, այլ իմ Հայրս որ երկինքի

մէջ է: Քեզ “Պետրոս”, այսինքն ժայռ կոչեցի, եւ  
այդ ժայռին վրայ պիտի շինեմ իմ եկեղեցիս, զոր  
մահն իսկ պիտի չկարենայ յաղթահարել: Քեզի  
պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները,  
եւ ինչ որ կապես երկրի վրայ՝ կապուած պիտի  
ըլլայ երկինքի մէջ եւ ինչ որ արձակես երկրի վրայ՝  
արձակուած պիտի ըլլայ երկինքի մէջ»: Ապա  
Յիսուս խստիւ պատուիրեց իր աշակերտներուն,  
որ ոե՛է մէկուն չըսեն թէ ինքն է Քրիստոսը:

Այս դէպքէն ետք, Յիսուս սկսաւ յայտնել  
իր աշակերտներուն, թէ պէտք է որ ինք  
Երուսաղէմ երթայ, ուր շատ պիտի չարչարուի  
քահանայապետներէն, Օրէնքի ուսուցիչներէն  
եւ երէցներէն. զինք նոյնիսկ պիտի սպաննեն եւ  
սակայն ինք երրորդ օրը յարութիւն պիտի առնէ:

Ասոր վրայ Պետրոս զինք մէկ կողմ տարաւ  
եւ սկսաւ հակառակելով վիճիլ. «Քաւ լիցի,  
Տէ՛ր, այդպիսի բան թող չպատահի քեզի»: Յիսուս Պետրոսի դառնալով ըսաւ. «Ետիս գնա,  
սատանա՛յ, դուն արգելք ես ինծի, որովհետեւ  
Աստուծոյ ծրագիրը չէ որ կը խորհիս, այլ մարդոց  
մտահոգութիւնը կ’արտայայտես»:

«Դուն  
Քրիստոսն  
եւ կենդանի  
Աստուծոյ  
Որդին»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

Ապա Յիսուս իր աշակերտ-  
ներուն ըսաւ. «Եթէ մէկը ուզէ  
ինծի հետեւիլ՝ թող ուրանայ  
իր անձը, առնէ իր խաչը եւ  
ետեւէս գայ: Որովհետեւ  
ով որ ուզէ իր անձը փրկել՝  
պիտի կորսնցնէ զայն, եւ ով  
որ ինծի համար կորսնցնէ  
իր անձը՝ պիտի գտնէ զայն:

Ի՞նչ օգուտ, երբ մէկը ամբողջ  
աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ,  
որովհետեւ ոե՛է բանով չի կրնար իր կեանքը ետ  
առնել: Արդարեւ, երբ մարդու Որդին գայ իր Հօր  
փառքով իր հրեշտակներուն հետ, իւրաքանչիւրին  
իրեն գործերուն համաձայն հատուցում պիտի  
կատարէ: Վստահ եղէք, որ հոս գտնուողներէն  
ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու  
Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ»:

Վեց օր ետք, Յիսուս իր հետ առաւ Պետրոսը,  
Յակոբոս եւ Յովհաննէս եղբայրները եւ զանոնք  
բարձր լեռ մը հանեց, ուր առանձին էին: Հոն  
այլակերպեցաւ անոնց դիմաց. իր դէմքը արեւու  
նման լուսաւոր դարձաւ եւ հագուստները լոյսի  
նման ճերմակ եղան: Եւ ահա երեւցան Մովսէսն ու  
Եղիան, որոնք կը խօսէին Յիսուսի հետ: Պետրոս  
ըսաւ Յիսուսի. «Տէ՛ր, ի՞նչ լաւ է հոս. եթէ կ’ուզես  
երեք վրաններ շինենք, մէկը քեզի, մէկը Մովսէսի  
եւ միւսը Եղիայի համար»: Մինչ Պետրոս կը խօսէր,  
ահա լուսաւոր ամպ մը ծածկեց  
զիրենք. ամպին մէջէն ձայն  
մը լսուեցաւ որ կ’ըսէր.  
«Այս է իմ սիրելի Որդիս որ  
հաւնեցայ. անոր մտիկ ըրէք»:

Երբ աշակերտները լսեցին  
ասիկա, սարսափահար՝ երեսի  
վրայ գետին ինկան: Յիսուս  
մօտենալով՝ դպաւ անոնց եւ ըսաւ. «Ոտքի՛ ելէք,  
մի՛ վախնաք»: Աշակերտները իրենց աչքերը վեր  
բարձրացուցին եւ Յիսուսէ զատ մարդ չտեսան:

Եւ մինչ լեռնէն վար կ’իջնէին, Յիսուս  
պատուիրեց անոնց, ըսելով. «Մինչեւ որ մարդու  
Որդին մեռելներէն յարութիւն չառնէ, ձեր  
տեսածը ոե՛է մէկուն մի՛ պատմէք»: Այն ատեն  
աշակերտները հարցուցին Յիսուսի. «Հապա  
ինչո՞ւ Օրէնքի ուսուցիչները կ’ըսեն թէ նախ  
Եղիան պէտք է գայ»: Յիսուս պատասխանեց.  
«Ճի՛շդ է, Եղիան նախ գալով՝ պիտի պատրաստէ  
ամէն ինչ. բայց գիտցէք որ Եղիան արդէն իսկ  
եկած է, սակայն մարդիկ զայն չճանչցան եւ անոր  
հետ վարուեցան ինչպէս որ ուզեցին: Նոյնպէս ալ  
Մարդու Որդին պիտի չարչարուի անոնց կողմէ»:  
Այն ատեն աշակերտները հասկեցան թէ Յովհաննէս  
Մկրտիչի մասին կը խօսէր ան:

«Եթէ մէկը  
ուզէ ինծի  
հետեւիլ՝ թող  
ուրանայ իր  
անձը, առնէ  
իր խաչը եւ  
ետեւէս գայ»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

«Այս է իմ  
սիրելի Որդիս  
որ հաւնեցայ.  
անոր մտիկ  
ըրէք»:

# ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ԳԱՌՆԻԿ Բ.Գ.

Ի՞նչ է իմաստութիւնը:  
Ինչպէ՞ս հասկցուած է Աստուածաշունչին մէջ:

Իմաստութիւն բառը շատ հոմանիշներ ունի: Եւ ամէն մէկ հոմանիշը կը յայտնէ անոր մէկ տարբեր ընկալումը: Օրինակ՝ երբ իմաստութեան դիմաց կը դրուի «բարձրագոյն գիտութիւն» բացատրութիւնը, կը հասկնաս ուրիշ բան մը, երբ կը դրուին «ուշիմութիւն» կամ «ճարտարութիւն» բառերը՝ կը հասկնաս ուրիշ բաներ: Ինչպէս է պարագան բոլոր բառերուն, իմաստութիւնն ալ դարերու ընթացքին եւ տարբեր շրջանակներու մէջ, զանազան հասկացողութիւններ ունեցած է:

Աստուածաշունչը դարաւոր գիրք մըն է, կամ աւելի ճիշդ՝ հատոր մըն է, որ բազմաթիւ դարերու ընթացքին գրուած գիրքեր կը բովանդակէ, նաեւ ունի շատ մասեր, որոնք տարբեր դարերու ընթացքին տարբեր խմբագրութիւններու ենթարկուած են: Ուստի, անոր մէջ յստակօրէն կը տեսնենք բառերուն զգեցած այլազան իմաստները:

Աստուածաշունչին մէջ իմաստութեան հասկացողութիւնը կարելի է դասակարգել գլխաւոր երկու ուղղութիւններու մէջ: Կայ մարդկային իմաստութիւնը եւ կայաստուածային իմաստութիւնը:

Մարդկային իմաստութիւնը դիտուած է իբր կարողութիւն մը, որուն վրայ պէտք է պարծենալ (Ա. ԹԳ 2.10):

Հին աշխարհին մէջ իմաստութիւն տեսնուած էր

ա.- Իմացական կարողութիւնը՝ որ կրնայ ծածուկ իրականութիւնները հասկնալ եւ բացատրել: Օրինակ՝ Ծնունդներու գիրքին մէջ կը կարդանք, որ Փարաւոնը երազ մը կը տեսնէ, եւ արթննալէն ետքը՝ կանչել կու տայ մոգերն ու իմաստունները, որպէսզի անոնք երազը մեկնեն (տե՛ս ԾՆ 41.8): Հաւանաբար, արքունի իմաստունները՝ այսօրուան մեր խորհրդատու կոչաձներուն պէս էին: Այսինքն՝ թագաւորին խորհուրդ կու տային: Բայց նկատի ունենալով, որ այն դարերուն աշխարհը կրօնական էր, իմաստունները նաեւ կրօնական համարուած հարցեր բացատրելու կը կանչուէին:

բ.- Արհեստագիտական կարողութիւնը (տե՛ս օրինակ՝ ԵԼԲ 28.3):

գ.- Արուեստագիտական կարողութիւնը (տե՛ս Ա. ԹԳ 16.18): Եւ այլն:

Այնինչ որ մարդկային իմաստութիւն կը կոչուի, սակայն, բուն իմաստութիւնը չէ, որովհետեւ անիկ կրնայ Տիրոջ կամքը իմանալու եւ զԱյն ճանչնալու չձառայել: Մարդկային կոչուած իմաստութիւնը կրնայ ինքզինք չտրամադրել այդ իմացութեան եւ ճանաչողութեան (Ա. ԹԳ 2.10): Իսկ երբ կը տրամադրէ՝ արդէն բուն իմաստութեան մէջ կը մտնէ կամ Աստուած անոր սրտին մէջ Իր իմաստութիւնը կը հաստատէ:

Մարդկային իմաստութիւնը միշտ փորձութեան մէջ է ինքզինք տեսնելու: Անիկա հեղուկեան ոգին կը մոռնայ, կը մատնուի նախանձի, հակառակասիրութեան, եւ ճշմարտութեան դէմ մեղանչելու (հմմտ ՅԿ 3.13-16): Առաւել՝ չաշխատիր աշխարհի վրայ իրաւունք եւ արդարութիւն ընելու (Ա. ԹԳ 2.10): Ուրեմն, իրաւ իմաստութիւնը անձին իմացական կամ այլ կարողութեան հետ կապ չունի, այլ հոգիի եւ մտքի այն բացուածքն է, որուն մէջ անձը ինքզինք կը դնէ ճամբուն մէջ Աստուծոյ կամքը իմանալու, եւ այդ ընթացքին մէջ զԱյն ճանչնալու, ու այս կեանքին մէջ գործելու այնպէս՝ որ իրաւունքը եւ արդարութիւնը հաստատուին: Երբ կ'ըսեմ «այս կեանքին մէջ», կը հասկնամ ոչ թէ միայն նեղ ընկերային շրջանակին մէջ, այլ համամարդկային առումով:

Ա. Թագաւորներու ակնարկեալ համարին մէջ գրուած է. «առնել գիրաւունս եւ զարդարութիւն ի մէջ երկրի»: Այս «ի մէջ երկրի» արտայայտութիւնը շատ լայն ձեւով կը բռնէ իրաւունքի եւ արդարութեան պատասխանատուութիւնը, անոր կու տայ համաշխարհային ծաւալ մը:

Ինչպէս կը տեսնուի, բուն իմաստութիւնը նաեւ որեւէ կապ չունի իմացական այն կարողութեան հետ, որ միտք ածելով կը զբաղի, այսինքն որեւէ կապ չունի փիլիսոփայութեան կամ իմաստասիրութեան հետ: Իմաստութիւնը իմաստասիրութիւն չէ:

Այսինքն՝ անիկա մտքի յատուկ աշխատանքի մը պտուղը չէ, այլ պտուղն է անձին առ Աստուած բացուածքին եւ ընկերային կեանքին նկատմամբ գործնական պատասխանատուութեան:

Ուրեմն, ինչպէս սաղմոսը կ'ըսէ. «Արդարին բերնէն իմաստութիւն կը բղխի, անոր լեզուն կը խօսի ինչ որ արդարացի է»: Այն բերանը որմէ իմաստութիւն կը բղխի, անիկա իմաստութեան սիրտ ունեցողի բերան է (հմմտ Սղ 77.72): Եւ իմաստութիւն ունեցողը արդար է:

Իմաստութիւնը իմաստասիրութիւն չէ:

Շատ ծանօթ է Առականերու գիրքին խօսքը, թէ իմաստութեան սկիզբը Տիրոջ երկիւղն է (Առ 1.7): Քիչ առաջ գործածեցի «առ Աստուածք բացուածք» բացատրութիւնը: Այդ բացուածքը այնպիսին է, որ Տիրոջ երկիւղը ունի իր մէջ: Ուշադրութեամբ դիտենք. չըսեր թէ իմաստութեան սկիզբը մարդկային միտքն է, այլ կ'ըսէ՝ Տիրոջ երկիւղը: Ի՞նչ խորունկ է «երկիւղ» բառը: Անիկա սարսափը չէ: Ի՞նչ է սակայն անիկա:

Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է.

«Եկէ՛ք, ո՛րդեակներ, մտիկ ըրէք ինծի, եւ ես ձեզի սորվեցնեմ՝ թէ ի՞նչ է Տիրոջ երկիւղը:

...Լեզուդ չարախօսութեան մի՛ ծառայեցներ, շրթներդ բնաւ թող նենգութիւն չխօսին:

Հեռու մնա չարիքէն, եւ բարիք ըրէ,

Խաղաղութիւն կամեցիր եւ զա՛յն հետապնդէ՛» (Սղ 34.11.13-14):

Կարելի է ըսել, բայց ասիկա երկիւղին սահմանումը չէ՛: Այլ բարոյական ընթացք մըն է, այսինքն՝ մեզի յորդոր կը տրուի, թէ ինչպէ՞ս պէտք է ապրինք մեր կեանքը:

Սաղմոսասացը զգոյշ էր, ան գիտէր թէ կարելի չէ սահմանել երկիւղը: Բայց յստակ կը տեսնէր, թէ անիկա կը յայտնուի բարոյական ընթացքի մը մէջ: Այն կեանքը որ չարութեան եւ նենգութեան ճամբով չ'երթար, այլ բարիք կ'ընէ եւ խաղաղութիւն կը կամենայ եւ կը հետապնդէ՝ անիկա կեանքով կը սահմանէ Տիրոջ երկիւղը: Եւ կեանքով սահմանուածը աւելի հզօր է քան բառերով սահմանուածը:

Հին Կտակարանեան ժամանակներու վախճանին, եբրայական կրօնական մտածողութեան մէջ կը սկսի զգալի տեղ ունենալ իմաստութեան թեման: Անիկա լայնօրէն կը վերաբերի աստուածային իմաստութեան, որ Աստուծոյ հետ է, նախագոյ է, արարչակից է, իբր լոյս՝ կը ճառագայթէ մարդկային կեանքին մէջ, կ'ընդունուի Աստուծոյ հաւատարմներուն կողմէ եւ անոնց կեանքին ուղղութիւն կ'ըլլայ:

Այս իմաստութիւնը անձնաւոր ներկայացուած է: Սակայն գիտենք, որ եբրայական կրօնական մտածողութիւնը միաստուածեան էր, այսինքն՝ յաւիտեաններուն մէջ մէկ եւ միակ Անձ մը կը խոստովանէր: Իմաստութեան անձնաւոր ներկայացումը չէր ձգտեր Աստուծոյ Անձին քով ուրիշ համագոյ անձ մը դնելու: Եբրայեցիներուն համար, իմաստութիւնը անձ մը չէր իրականութեան մէջ, այլ Աստուծոյ ստորգոյցութիւն մըն էր: Հետեւաբար, երբ անձնաւոր իմաստութեան մասին կը խօսէին՝ անոր կու տային զօրութեան մը իմաստը. զօրութեան մը՝ որ Աստուծմէ է եւ իբր լոյս ներգործական

ներկայութիւն է ստեղծագործութեան կեանքին մէջ:

Յիսուս ինք ալ իմաստութեան մասին խօսեցաւ, եւ իր առաքելութիւնը ցոյց տուաւ որպէս յայտնութիւն մը աստուածային իմաստութեան: Օրինակ՝ երբ ըսաւ՝ «Դատաստանի օրը Հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս» (Մտ 12.42, Ղկ 11.31): Ղուկաս աւետարանիչ Յիսուսի այս խօսքէն ետքը գրած է նաեւ հետեւեալը՝ «Դատաստանի օրը Նինուէացիները այս սերունդի մարդոց դիմաց պիտի կանգնին եւ պիտի դատապարտեն զիրենք, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս» (Ղկ 11.32): Յստակօրէն, Յիսուսի իմաստութեան առաքելութիւնը՝ առ Աստուած դարձի համար էր: Ան իմաստութիւնը յայտնեց իբր այն ճանապարհը՝ որ առ Աստուած դարձի ճանապարհն է:

Այլակերպութեան դրուագին մէջ Յիսուսի կողքին կ'երեւան Մովսէսն ու Եղիան, որոնք անոր հետ կը խօսէին: Այս յայտնութիւնը մեզի կը պատմէ ո՛չ թէ միայն աստուածային իմաստութեան դարէ դար փոխանցումին մասին, այլ եւ՝ անոր կորիզին, որ Յիսուսի զոհագործման կամ խաչին իմաստն է: Ի՞նչ էր, սակայն, այն իմաստը:

Վաղագոյն շրջանին իսկ, Քրիստոսի հետեւորդներուն հաւատքի փորձառութիւնը զայն պիտի տեսնէր որպէս Աստուծոյ իմաստութեան յայտնութիւնը: Պօղոս առաքեալ Քրիստոսի համար «Աստուծոյ իմաստութիւնը» ըսած է (Ա. Կր 124): Ըստ առաքեալին, Աստուծոյ իմաստութեան խորհրդանշանն է խաչը, անիկա հաշտարար է, մարդկային կեանքի «թշնամութեան պատը» կը քանդէ (Եփ 2. 14), եւ արժանի կը դարձնէ մարդիկը Աստուծոյ ներկայութեան կանգնելու (տե՛ս նոյն, հմր 18): Ինչպէս կը տեսնուի, Պօղոս առաքեալ եւս, Յիսուսի նման, իմաստութիւնը ցոյց կու տայ իբր առ Աստուած դարձի ճանապարհ: Այս հասկացողութեամբ է, որ ան Քրիստոսը տեսած է իբր Աստուծոյ իմաստութիւնը:

Աւետարաններուն մէջ Քրիստոսի անձին շատ շօշափելի կերպով նոյնացումը աստուածային իմաստութեան՝ մենք կը տեսնենք Յովհաննէսի աւետարանին էջերուն վրայ: Սկիզբէն,

Յիսուսի  
իմաստութեան  
առաքելութիւնը՝  
առ Աստուած  
դարձի համար  
էր:

աւետարանիչը Քրիստոսը ներկայացուցած է որպէս Բանն Աստուած: Բանի գաղափարը իր մէջ կ'ընդգրկէ իմաստութեան գաղափարը, բայց աւելի էաբանական է, այսինքն՝ կը վերաբերի Աստուծոյ էութեան իսկ: Աւետարանիչը իւրացուցած էր ամէն ինչ որ իմաստութեան մասին ըստուած էր իր աւանդութեան մէջ, սակայն անոր տուած էր նոր մեկնաբանութիւն մը: Մեկնաբանութիւն մը՝ որ հաւատքի իր փորձառութենէն կը բխէր: Բայց ասիկա ուրիշ նիւթ է:

Քրիստոս ինք Բանին Աստուծոյ մարմնացումը եւ մարդացումն է: Ուստի ինք նաեւ աղբիւրն է յաւիտենական կեանքի խօսքերուն, այլ բացատրութեամբ՝ իմաստութեան: Որո՞նք են, որ այդ իմաստութիւնը կը լսեն եւ կրնան հաղորդակից ըլլալ անոր:

Անոնք կը լսեն եւ կրնան հաղորդակից ըլլալ՝ որոնք լոյսի մէջ կը քայլեն: Իսկ Ի՞նչ կը նշանակէ «լոյսի մէջ քայլել»: Խոստովանիլ սեփական մեղքերը, վստահ ըլլալ Աստուծոյ ներումին (Ա. ՅՆ 1.9), գործադրել Աստուծոյ պատուիրանները եւ ապրիլ

... ապրիլ  
այնպէս՝  
«ինչպէս  
Քրիստոս  
իմ  
ապրեցաւ»:

այնպէս՝ «ինչպէս Քրիստոս ինք ապրեցաւ» (նոյն, 2.3, 6):

## ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱԲԵՏԱՐԱՆԻՆ

ՀԵՂՈՒՆԱՎ՝ ՉԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱԲՈՐԵԱՆ  
ԽԱՐԱԳԻՐ՝ ԳԵՈՒՆԿ Ք. Գ.

Ժ

ՅԻՍՈՒՍ ԵՎ ԱՆՏԵՐԿՈՒ ԱՆՊԵՏԱԿՆԵՐԸ (1- 4):

«Յիսուս իր մօտ կանչեց տասներկու աշակերտները եւ անոնց իշխանութիւն տուաւ՝ պիղծ ոգիները իրենց հնազանդեցնելու եւ մարդոցմէ դուրս հանելու գանոնք, ինչպէս նաեւ բժշկելու բոլոր ցաւերն ու հիւանդութիւնները:

Տասներկու առաքելներուն անուններն են.- Առաջին՝ Սիմոն, որ Պետրոս կոչուեցաւ, եւ եղբայրը՝ Անդրէաս, Ջեբեդէոսի որդիները՝ Յակոբոս եւ եղբայրը Յովհաննէս, Փիլիպպոս եւ Բարթողիմէոս, Թովմաս եւ Մատթէոս մաքաւոս, Ալփէոսի որդին՝ Յակոբոս, եւ Ղեբէոս, որ Թադէոս կոչուեցաւ, Սիմոն Նախանձայոյց եւ Յուդա Իսկարիովացի, որ մատնեց զինք»:

Ինչո՞ւ տասներկու թիւը:

Յիսուս չէ՞ր կրնար իր աշակերտներուն թիւը տասնհինգ ընել, կամ տասնվեց ընել, կամ քսան ընել, կամ երեսուն ընել: Ինչո՞ւ

համար միայն տասներկու աշակերտներ ընտրեց: Արդեօք թիւը նշանակութիւն մը ունէ՞ր:

Հրեայ ժողովուրդը տասներկու ցեղեր ունէր: Արդեօք Յիսուս անոնցմէ իւրաքանչիւրին համար եւ անոնցմէ իւրաքանչիւրէն ներկայացուցիչ մըն է, որ ընտրած եղաւ այդպէս: Գիտենք որ ընտրուածներէն տասնըմէկը՝ գալիլիացիներ էին: Գիտենք նաեւ, որ գալիլիացիները ընդհանրապէս Ներթաղիմի եւ Ջաբուղոնի ցեղերն էին: Հետեւաբար՝ ընտրուածները չէին կրնար ներկայացուցիչները ըլլալ Իսրայէլի տասներկու ցեղերուն:

Յակոբոս առաքեալ իր ընդհանրական նամակին սկիզբը գրած է դիմումի սա խօսքը. «Յակոբոս՝ Աստուծոյ ու Տէր Յիսուս Քրիստոսի ծառայ՝ տասներկու ցեղերուդ, որ ամէն կողմ ցրուած էք»: Ի՞նչ կը նշանակէ այս տասներկու ցեղերու ակնարկութիւնը:

Հարցումը որ պէտք է դրուի՝ սա է. առաքեալին նամակը որո՞նց ուղղուած է:

Յիսուսը ընդունողներուն:

Քանի որ այդպէս է՝ ինչո՞ւ կ'ըսէ՝ «տասներկու ցեղերուդ»:

Ըսինք, թէ Աստուծոյ ժողովուրդը իրեն հովիւներ ունէր, որոնք իրենց պարտականութիւնը չկատարեցին: Այդ պատճառով ալ Յիսուս գթաց ժողովուրդին վրայ, որովհետեւ անոնք «հովիւ չունեցող ոչխարներու պէս» էին: Եւ Աստուծոյ կամքին համաձայն, ընտրեց Աստուծոյ նոր ժողովուրդին նոր հովիւները: Աստուած ո՛չ թէ հին Իսրայէլը վերականգնել ուզեց, այլ ուզեց նորը ստեղծել: Երեմիա մարգարէի միջոցով Տէրը յայտնած է իր մերժումը անհաւատարիմ ժողովուրդին, եւ ընտրութիւնը անոր դրացի ժողովուրդներուն, այլ բացատրութեամբ մը Տէրը յայտնած է այլ ժողովուրդներու իր ընտրութիւնը, եթէ անոնք զինք խոստովանին (տե՛ս Եր 12.16): Միւս մարգարէներուն մօտ ալ կը գտնենք Աստուծոյ ուխտին համաշխարհայնացման գաղափարը: Իսկ Նոր Կտակարանը արդէն մեզի կը խօսի այդ ընտրութեան կատարուելուն մասին:

Արդ, նմանութիւն մը կայ: Ինչպէս որ Աստուծոյ հին ժողովուրդը տասներկու ցեղերէ բաղկացած էր, այնպէս ալ խորհրդանշա-

շականօրէն՝ Աստուծոյ նոր ժողովուրդն ալ կ'արտայայտուի տասներկու թիւով: Ինչպէս որ Յակոբի տասներկու զաւակները հին ժողովուրդը կը ներկայացնէին, Յիսուսէ ընտրուած տասներկու աշակերտներն ալ Աստուծոյ նոր ժողովուրդը կը ներկայացնեն:

Առաքեալ-ներու ընտրութեամբ՝ Յիսուս հիմը կը դնէ եկեղեցիին:

Աստուած մերժեց հին ժողովուրդը, եւ ընտրեց իր նոր ժողովուրդը՝ եկեղեցին:

Առաքեալներու ընտրութեամբ՝ Յիսուս հիմը կը դնէ եկեղեցիին:

Յիսուս ընտրելէ ետքը տասներկուքը, անոնց իշխանութիւն կու տայ պիղծ ոգիները հնազանդեցնելու եւ մարդոցմէ դուրս հանելու:

Յիսուսի գործունէութեան կարեւորագոյն երեսները երեք են, ինչպէս տեսանք: Անոնք էին՝ ուսուցանել, քարոզել եւ բժշկել: Հիմա իր ընտրած աշակերտներուն ընելիքը կ'որոշէ: Ի՞նչ պիտի ըլլար անոնց ընելիքը, ի՞նչ կ'ըսէ մեզի բնագիւղը:

Կը տեսնենք, որ անոնց բժշկելու զօրութիւն կու տայ, նաեւ զանոնք կը զրկէ երկիրքի արքայութեան մօտեցած ըլլալը քարոզելու:

Ուշագրաւ է, որ անոնց ուսուցանելու չի զրկեր: Ինչո՞ւ արդեօք:

Ուսուցումը Յիսուսի պարագային՝ առաւել իմաստ մը ունէր քան պարզ վարդապետական աշխատանք մը: Անիկա նոր ճշմարտութիւն մը յայտնելու միջոց էր: Եւ աշակերտները տակաւին ամբողջապէս չէին ճանչցած Յիսուսը, որ կարենային անոր նոր ճշմարտութիւնը հասկնալ: Պէտք էր սպասել մինչեւ յետ յարութեան փորձառութիւնը, երբ Յիսուս իր աշակերտները պիտի զրկէր աշխարհ՝ նաեւ սորվեցնելու: Յարութեան դէպքով է, որ Յիսուսի յայտնած նոր ճշմարտութիւնը իր լրումին հասաւ կամ կատարելապէս յայտնուեցաւ:

Ուրեմն, Յիսուս իր աշակերտները ընտրելէ ետքը, զանոնք պիտի զրկէր բժշկելու եւ քարոզելու:

Կ'ուզեմ՝ այստեղ բացատրել «առաքեալ» անունը:

Առաքել՝ զրկել կը նշանակէ: Իսկ առաքեալ՝ զրկուած:

Բայց ստուգաբանական իմաստը չ'արտայայտեր «առաքեալ»ին բուն նշանա-

կութիւնը: Առաքեալը ան է, որ ոչ թէ միայն զրկուածն է, այլ նաեւ այն զրկուածը՝ որ զինք զրկողը կը ներկայացնէ ամբողջապէս: Ո՛չ թէ իր անձը, այլ զինք զրկողին անձը: Օրինակ՝ Հին Կտակարանի մարգարէները զԱստուած կը ներկայացնէին, Անոր «բերան»ն էին:

Առաքեալը ան է, որ ոչ թէ միայն զրկուածն է, այլ նաեւ այն զրկուածը՝ որ զինք զրկողը կը ներկայացնէ ամբողջապէս:

Յիսուսի առաքեալներն ալ զինք կը ներկայացնէին: Ասոր համար է, որ ան ըսած է. «Ան որ ձեզ կ'ընդունի՝ զիս ընդունած կ'ըլլայ, եւ ով որ զիս կ'ընդունի՝ զիս զրկողը ընդունած կ'ըլլայ» (Մտ 11.40):

Յստակէ, ուրեմն, որ առաքեալը ամբողջապէս կը ներկայացնէ զինք զրկողը:

Յիսուս աշակերտները ընտրելով, եւ զանոնք առաքեալներ կարգելով՝ շատ բարձր պաշտօն մը կու տար անոնց:

Աշակերտներուն անունները թուելու սկսելով, կ'ըսէ թէ առաջինը Սիմոնն էր: Անմիջապէս բացատրական մը կ'աւելցնէ, թէ այս Սիմոնը ան է, որ Պետրոս կոչուեցաւ: Աւետարանիչը կը բացատրէ, քանի որ աշակերտներու ցանկին մէջ ուրիշ Սիմոն մըն ալ կայ, որ Նախանձայոյց կոչուած է:

Պետրոս առաքեալի համար կ'ըսուի՝ «առաջին»ը: Ինչո՞ւ միւսներուն համար չէ ըսուած՝ երկրորդը կամ երրորդը եւայլն:

Պետրոս առաքեալի առաջնութեան հարցը ժամանակին բաւական վէճերու առիթ տուած է: Կաթոլիկ եկեղեցին առաջնութիւնը կը հասկընայ որպէս իշխանութիւն մը բոլոր միւս առաքեալներուն վրայ: Այսինքն՝ թէ Պետրոս առաքեալ միւս առաքեալներուն վրայ հեղինակութիւն ունէր: Մինչդեռ բոլոր միւս եկեղեցիները անոր մէջ կը տեսնեն ուրիշ իմաստ մը:

Պետրոս առաքեալ անունը իսկապէս մէջ ամենէն համարձակ անձն էր, որ թէ՛ իր խօսքերով եւ թէ՛ իր գործունէութեամբ առաջինն էր...:

Պետրոս առաքեալ աշակերտներու խումբին մէջ ամենէն համարձակ անձն էր, որ թէ՛ իր խօսքերով եւ թէ՛ իր գործունէութեամբ առա-

Ղինն էր. ինք ամենէն առաջ կ'արտայայտուէր, ինք ամենէն առաջ կը նախաձեռնէր: Օրինակ. յիշեցէք Յիսուսի համբարձումէն ետքը, երբ Պենտեկոստէի օրը Ս. Հոգին իջաւ առաքեալներուն վրայ՝ ինք էր, որ առաջին խօսողը եղաւ (տե՛ս Գրծ 2.14-36): Երբ լսուեցաւ, թէ Փիլիպպոս սարկաւազը Սամարիա գացեր է եւ քարոզեր է՝ ինքն էր դարձեալ, որ Յովհաննէսի հետ գնաց նոր հաւատացեալները առաջնորդելու (տե՛ս նոյն, 8.14-17): Եւ այլն:

Յիսուսի երկրաւոր առաքելութեան օրերուն ալ Պետրոսը կը տեսնենք առաջին գիծի վրայ: Յիսուս երբ հարցուց մարդիկ իմ մասին ի՞նչ կ'ըսեն: Պետրոս ինք եղաւ պատասխանողը (տե՛ս Մտ 16.15-16):

Ան նկարագիր մըն էր, որ կը սիրէր ամէն բանի մէջ առաջինը ըլլալ, նետուիլ: Այդ իր նկարագրին համար ալ բնականօրէն առաքեալներու խումբին մէջ ղեկավար դարձեր էր: Բայց ատիկա երբեք չէր նշանակեր, թէ Յիսուս յատուկ կերպով պաշտօն մը տուեր էր իրեն կամ միւս աշակերտներուն վրայ հեղինակութիւն մը տուեր էր: Մենք գիտենք, որ վաղագոյն շրջանի եկեղեցիին գլխաւոր ղեկավարը Պետրոսը չէր, այլ առաքեալներուն իսկ հաւանութեամբ՝ Յակոբոս Տեառնեղբայրն էր:

Ապա կը յիշուի Անդրէասը, որ միւս աւետարաններուն մէջ չորրորդ անունն է: Յանկին մէջ հետաքրքրականը մեզի համար այն է, որ Մատթէոսի անունին քով՝ անոր ասպարէզը նշուած է, թէ ան մաքսաւոր էր: Այս մասին բացատրութիւն տուած եմ, դարձեալ չկրկնեմ:

Ուրիշ հետաքրքրական պարագայ մըն է Թադէոս առաքեալի անունը: Ան Մատթէոսեան ցանկին մէջ Ղեբէոս անունով ալ յիշուած է: Թադէոս անունը հաւանաբար յունական անունն էր, իսկ Ղեբէոսը՝ եբրայական անունը:

Երկու ուրիշ անուններու մասին ալ բացատրութիւն տամ. Սիմոն Նախանձայոյց եւ Յուդա Իսկարիովտացի:

Սիմոն Նախանձայոյցը նաեւ Կանանացի կոչուած է: Կանանացի անունը թերեւս մտածել տայ, թէ մեզի ցոյց կը տրուի, որ այս Սիմոնը Կանան անուն քաղաքէ մըն էր:

Բայց այդ անունով քաղաք չէ եղած: Այս Կանանացի անունը չի նմանիր Նազովրեցի կամ Գալիլիացի անունին: Կանան բառը արամերէնի մէջ նախանձայոյց կը նշանակէ: Յիսուսի ժամանակ կուսակցութիւն մը կար, որուն անդամները այդ բառով կը կոչուէին կամ կը ձանչուէին: Ուրեմն, Կանանացի անունը ցոյց կու տայ, թէ այս Սիմոնը այդ կուսակցութեան անդամ էր:

Կանանացիները կամ Նախանձայոյցները մոլեռանդ ազգայնականներ էին: Անոնք որեւէ օտար լուծ չէին հանդուրժեր, եւ զինեալ պայքարի մարդիկ էին: Այս կուսակցութիւնն է, որ հռոմի դէմ մեծ ըմբոստութիւն մը կազմակերպեց եւ պարտուեցաւ, ու պատճառ եղաւ, որ Երուսաղէմը հիմնայատակ կործանի:

Վերջին անունը Յուդա Իսկարիովտացիինն է:

Իսկարիովտացի անունը արդեօք տեղացիութիւն մը ցոյց կու տայ, թէ ուրիշ բան կը նշանակէ:

Բազմաթիւ բացատրութիւններ տրուած են. ըսուած է, թէ ան Իսաքարի ցեղէն էր, որ ճիշդ չի թուիր: Թէ՛ արամերէնի մէջ Իսկարիոթա կամ Իսկարիովթա բառը կը նշանակէ դրամապանակ կամ գանձանակ, եւ թերեւս անկէ կու գայ Յուդայի մականունը: Կրնա՞յ ըլլալ արդեօք: Թերեւս: Որովհետեւ Յովհաննէս աւետարանիչ կը յիշէ, թէ Յուդան ինք գանձանակը իրեն հետ կը պտտցնէր (ՅՏ 12.6): Կը տեսնենք, որ եբրայերէն լեզուին մէջ «իսքարա» բառը կայ, որ կը նշանակէ խեղդել: Գուցէ Յուդայի մականունը նշանակած է՝ խեղդուածը: Կրնա՞յ արդեօք ուղիղ ըլլալ այս բացատրութիւնը: Գիտենք, որ ան Յիսուսը մատնելէ ետքը, գնաց եւ ինքզինք կախեց: Ի վերջոյ կայ ուրիշ բացատրութիւն մը, որ տեղացիութեան մը կը կապուի: Քիչ առաջ ըսի, որ առաքեալներէն տասնմէկը գալիլիացիներ էին: Միայն Յուդան գալիլիացի չէր: Ըստ ոմանց, Հրէաստան նահանգին մէջ կար Կարիոթ կամ Կէրիոթ կոչուած պզտիկ քաղաք մը, եւ թերեւս Յուդան այնտեղէն էր: Իսկ «իշ» բառը եբրայերէնին մէջ մարդ կը նշանակէ: Ուրեմն, Իշկարիոթ կը նշանակէ՝ Կարիոթէն ելող մարդը:

(Շարունակելի 40)

**ԵՐԵՍՆՕՐԵԱԿ**

*Երպուճաբթի, 20 Յոդիս 2009*

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՈՒԼՈՑ**

*Հրեգճաբթի, 23 Յոդիս 2009*

11.00 Աղօթաժողով՝  
Քոյրերու ժողով

*Կրրապ, 26 Յոդիս 2009*

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

*Հրեգճաբթի, 30 Յոդիս 2009*

**Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵԱՐՈՊ**

11.00 Աղօթաժողով՝  
Քոյրերու ժողով

*Կրրապ, 02 Օգոստոս 2009*

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

*Հրեգճաբթի, 06 Օգոստոս 2009*

11.00 Աղօթաժողով՝  
Քոյրերու ժողով

*Կրրապ, 09 Օգոստոս 2009*

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

*Հրեգճաբթի, 13 Օգոստոս 2009*

11.00 Աղօթաժողով՝  
Քոյրերու ժողով

*Կրրապ, 16 Օգոստոս 2009*

**ՎԵՐԱՓՈՒՆՈՒՄ Ա. ԱՏՈՒԽԾԱԾԱՐ**

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ

*Երպուճաբթի, 17 Օգոստոս 2009*

**ՅԻՇԱՏԱԿ ՄԵՈՒԼՈՑ**

*Հրեգճաբթի, 20 Օգոստոս 2009*

11.00 Աղօթաժողով՝  
Քոյրերու ժողով

*Կրրապ, 23 Օգոստոս 2009*

09.30 Ժամերգութիւն  
11.00 Ս. Պատարագ



**ՀՈՎԻԷԸ  
ԸՆՏԱՆՆԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ**

Անոնք որ կը փափաքին  
հովիւին այցելութիւնը ունենալ  
իրենց տունէն ներս,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

Հոգեւազատեան Ձեր  
արձանագրութիւնները նախօրօք  
կատարե՛ժէք կաղովելով  
ԵԿԵՂԵՅՈՂ ԴԻԲԱՆԱՏՈՒՄ

ՀԻԲԱՆԴԱԵՐՈՒ ԱՅԾԵԼՈՒԹԻՒՄ  
Բարեհաճեցէք հեռաձայնել Արժ. Տ.  
Գառնիկ Քինյ. Գոյունեանի.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203

Սոյն թերթիւն ե-նամակով ստանալու  
չաար Ձեր ե-չաձէն ուրոարկե՛ժէք  
eglise58@sourphagop.com-իւ

Նախորդ թիւերը կրնաք գտնել  
[www.sourphagop.org/lradou](http://www.sourphagop.org/lradou)  
կայքէջիւ վրայ